ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/37

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/219-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 10.01.2020թ.-ի թիվ 09/15 գրության հիման վրա, 13.01.2020թ.-ին «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 21.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/21 համարի ծածկագիրը, իսկ 27.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/21 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/37 համարի ծածկագիրը և 18.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 18.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.02.2020թ.-ին:

2. **<u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 10.01.2020թ.-ի թիվ 09/15 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«2019 թվականի դեկտեմբերի 16-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով բժշկական գործիքների և պարագաների գնման ընթացակարգ: Գնանշման հարցման մասնակիցների թվում հայտ է ներկայացրել նաև «Միդա Թրեյդ» ՍՊ ընկերությունը, որը հայտ է ներկայացրել ընթացակարգի 1, 2, 3, 9, 15, 23, 51, 54, 57, 61 և 69 չափաբաժինների համար և գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 23-ի 2-րդ նիստի 3-րդ որոշմամբ, ի թիվս մի շարք այլ մասնակիցների, «Միդա Թրեյդ» ՍՊ ընկերությանը ևս առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել հայտով ներկայացված չափաբաժինների տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունների շտկում՝ հրավերի պահանջների նկատմամբ: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին դեկտեմբերի 25-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում բոլոր մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, սակայն «Միդա Թրեյդ» ՍՊ ընկերության 51-րդ չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Դեկտեմբերի 27-ին ընթացակարգի քարտուղարը լրացուցիչ ծանուցմամբ առաջարկել է ներկայացնել պաշտոնական աղբյուրներով հիմնավորված տեղեկատվություն՝ տեխնիկական բնութագրերով ներկայացված չափորոշիչների վերաբերյալ, քանի որ ներկայացված ապրանքային նշանը և արտադրող ընկերությունը ներառված չեն հրավերով սահմանված անհրաժեշտ պարտադիր պահանջ հանդիսացող ցանկում, սակայն մասնակցի հավաստումը հակառակի մասին, իրենից ներկայացնում էր մասնակից ընկերության տնօրենի կողմից համապատասխանության մասին կնքված և այլ պաշտոնական աղբյուրներով չհաստատված գրություն:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 8-ի 3-րդ նիստի 2-րդ որոշմամբ «Միդա Թրեյդ» ՍՊ ընկերության 51-րդ չափաբաժինը մերժվել է՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«Միդա Թրեյդ» ՍՊ ընկերության տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, տրամադրվում է «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 51-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը պարունակող քաղվածքը /ամբողջական հրավերը տեղադրված է www.gnumner.am կայքում/, ընթացակարգի մասնակից «Միդա Թրեյդ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած գնանշման հարցմանը մասնակցելու հայտը և շտկված տեխնիկական բնութագիրը, քարտուղարի լրացուցիչ ծանուցումը, «Միդա Թրեյդ» ՍՊ ընկերության լրացուցիչ ծանուցման պատասխանը, ընթացակարգի արձանագրությունների պատճենները, ինչպես նաև GE Healthcare ընկերության ուլտրաձայնային համակարգերի համալրիչ տվիչների տեխնիկական անձնագրից շահագործման համար նախատեսված թույլատրելի սոնոգրաֆիայի գելերի ցանկի քաղվածքը:»:

3. <u>«Միդա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/219-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացված դիրքորոշմամբ հայտնել են հետևյալը.

««Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված թիվ «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին և ընտրված մասնակից է ճանաչվել մի քանի չափաբաժինների մասով:

Ստորև ներկայացնում ենք մեր առարկությունները և դիրքորոշումը մասնավորապես 51-րդ չափաբաժնի համար, որի մասով պատվիրատուն մերժել է մեր հայտը և 10.01.2020թ. թիվ V02.4/[19266]-20 գրության հիման վրա, 13.01.2020թ. թիվ 26/26-1/219- 2020 գրությամբ նախաձեռնել է «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Մրցույթի հրավերով պատվիրատուն թիվ 51 չափաբաժնի համար սահմանել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Սոնոգրաֆիայի գել (սոնո գել)/2

Ջրային հիմքով, մածուցիկ գել նախատեսված ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ օգտագործելու համար: Չի գրգռում մաշկը, չի վնասում ուլտրաձայնային սարքավորումների տվիչները: Պարունակում է՝ ջուր, պոլիմեր, խոնավեցնող միջոցներ, կոնսերվանտներ և գունավորող միջոցներ: Սոնո գելի pH-ը՝ 6,5±0,5: Խտությունը՝ 1,05gr/cm3± 0,03: Փաթեթավորումը՝ 260գ±10գ: Առաջարկվող ուլտրաձայնային գելը պետք է պարտադիր ներառված լինի GE Healthcare ընկերության ուլտրաձայնային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ: Պետք է չինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:

Ստորև ներկայացնում ենք այն տեխնիկական բնութագիրը, որը ներկայացրել է մեր կազմակերպությունը՝

Ջրային հիմքով, մածուցիկ գել նախատեսված ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ օգտագործելու համար: Չի գրգռում մաշկը, չի վնասում ուլտրաձայնային սարքավորումների տվիչները: Պարունակում է՝ ջուր, պոլիմեր, խոնավեցնող միջոցներ, կոնսերվանտներ և գունավորող միջոցներ: Սոնո գելի pH-ը՝ 6,5±0,5: Խտությունը՝ 1,05gr/cm3± 0,03: Փաթեթավորումը՝ 260գ±10գ: Առաջարկվող ուլտրաձայնային գելը պետք է պարտադիր ներառված լինի GE Healthcare ընկերության ուլտրաձայնային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ: Պետք է չինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:

Ինչպես երևում է վերոնշյալից, մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջովին համապատասխանել է հրավերի պահանջներին:

Թիվ 2 արձանագրությունով պատվիրատուն տեղեկացրել է, որ կա անհամապատասխանություն մեր կողմից նշված տեխնիկական բնութագրում և պահանջել են հստակեցնել pH-ը, խտությունն ու տարողունակությունը:

Ինչին ի պատասխան մեր կողմից ներկայացվել է հստակեցված pH-ը, խտությունն ու տարողունակությունը.

Ջրային հիմքով, մածուցիկ գել նախատեսված ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ օգտագործելու համար: Չի գրգռում մաշկը, չի վնասում ուլտրաձայնային սարքավորումների տվիչները: Պարունակում է՝ ջուր, պոլիմեր, խոնավեցնող միջոցներ, կոնսերվանտներ և գունավորող միջոցներ: Սոնո գելի pH-ը՝6,8 Խտությունը՝ 1,05gr/cm3+-0,03: Փաթեթավորումը՝ 250գ: Առաջարկվող ուլտրաձայնային գելը պետք է պարտադիր ներառված լինի GE Healthcare ընկերության ուլտրաձայնային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

Խտության մասով տեխնիկական բնութագիրը նշվել է միջազգային ստանդարտներին համապատասխան թույլատրելի շեղումով:

Այսինքն, մեր կողմից կատարվել է բոլոր պահանջված շտկումները:

Թիվ 3 արձանագրությունով պատվիրատուն նշում է, որ «Աիդա Թրեյդ» ՍՊ ընկերությունը նույնպես շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն 51-րդ չափաբաժնի շտկած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, և անհիմն կերպով մերժել է մեր գնային առաջարկը:

Մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում չկա որևէ շեղում հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրին: Եթե տեխնիկական բնութագիրը համապատասխանում է ներկայացված պահանջներին անխտիր, հետևաբար տվյալ գելը չի կարող չհամապատասխանել տվյալ սարքի կիրառման համար ներկայացվող պահանջներին:

Ավելին, պատվիրատուն թույլ է տալիս գնումների մասին ՀՀ օրենքի խախտումներ:

Մասնավորապես «Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է, որ

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Տվյալ դեպքում, պատվիրատուն

ա) չի նշել և չի ընդունում «կամ համարժեք» ապրանքը

բ) հստակ հղում է կատարում արտադրողին և ապրանքային նշանին

գ) հստակ հղում է կատարում մոդելին

Իսկ տվյալ դեպքում ներկայացնելով գնվելիք չափաբաժնի ավելին քան մանրամասն տեխնիկական բնութագիրը, պատվիրատուն խնդիր չի ունեցել և չէր կարող ունենալ գնման առարկային բնութագրի անհնարինության համար, որպեսզի հղում աներ կոնկրետ արտադրողի և մոդելին, իսկ եթե նույնիսկ, ապա պետք է ընդունի համարժեք ապրանք, որի տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է հրավերի տեխնիկական բնութագրին:

Առավել ևս, որ նախորդ տարիներին նույն սարքի համար օգտագործել են այս նույն ապրանքը:

Մեր ներկայացված տեխնիկական բնութագիրը շատ հստակ համապատասխանում է հրավերի պահանջին հաշվի առնելով Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետը և մեր կողմից թույլ չի տրվել որևէ խախտում:

Վստահ ենք, որ Ձեր կողմից կցուցաբերվի անաչառ վերաբերմունք և կմերժվի ֆինանսների նախարարության կողմից ներկայացված ընթացակարգը:

Միևնույն ժամանակ խնդրում ենք պարտավորեցնել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին կարատել փոփոխություն թիվ 3 և թիվ 4 արձանագրություններում և տվյալ չափումբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ին:»:

4. <u>ՍՑ-LO-2020/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 51-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագրերը՝ Սոնոգրաֆիայի գել (սոնո գել)/2, ջրային հիմքով, մածուցիկ գել նախատեսված ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ օգտագործելու համար: Չի գրգռում մաշկը, չի վնասում ուլտրաձայնային սարքավորումների տվիչները: Պարունակում է՝ ջուր, պոլիմեր, խոնավեցնող միջոցներ, կոնսերվանտներ և գունավորող միջոցներ: Սոնո գելի pH-ը՝ 6,5 ± 0,5: Խտությունը՝ 1,05 gr/cm^3± 0,03: Փաթեթավորումը՝ 260գ± 10գ: Առաջարկվող ուլտրաձայնային գելը պետք է պարտադիր ներառված լինի GE Healthcare ընկերության ուլտրաձայնային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին...:

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 51-րդ չափաբաժնի համար առաջարկել է հետևյալը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

51	Սոնոգրաֆիկ գել(սոնո գել)/2	Սոնոգրաֆիկ գել(սոնո գել)/2	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան	Ջրային հիմքով, մածուցիկ գել նախատեսված ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ օգտագործելու համար: Չի գրգռում մաշկը, չի վնասում ուլտրաձայնային սարքավորումների տվիչները: Պարունակում է ջուր, պոլիմեր, խոնավեցնող միջոցներ, կոնսերվանտներ և գունավորող միջոցներ: Սոնո գելի pH-ը՝ 6,5 ± 0,5: Խտությունը 1,05 gr/cm3± 0,03: Փաթեթավորումը 260գ± 10գ: Առաջարկվող ուլտրաձայնային գելը պետք է պարտադիր ներառված լինի GE Healthcare ընկերության ուլտրաձայ նային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.12.2019թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն թիվ 1.1 հավելվածում բոլոր չափաբաժիններում բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը, 51-րդ չափաբաժնում հստակ չի pH-ը, խտությունն ու տարողունակությունը…:

Նույն արձանագրության համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.9-րդ կետի պահանջները, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Մասնակիցը ներկայացրել է արձանագրված անհամապատասխանության շտկված հետևյալ տարբերակը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

51	Սոնոգրաֆիկ գել(սոնո գել)/2	Սոնոգրաֆիկ գել(սոնո գել)/2	Տիանջին գելտեկ	Ջրային հիմքով, մածուցիկ գել նախատեսված ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ օգտագործելու համար: Չի գրգռում մաշկը, չի վնասում ուլտրաձայնային սարքավորումների տվիչները: Պարունակում է ջուր, պոլիմեր, խոնավեցնող միջոցներ, կոնսերվանտներ և գունավորող միջոցներ: Սոնո գելի pH-ը՝ 6,8: Խտությունը 1,05 gr/cm3± 0,03: Փաթեթավորումը 260գ± 10գ: Առաջարկվող ուլտրաձայնային գելը պետք է պարտադիր ներառված լինի GE Healthcare ընկերության ուլտրաձայ նային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին ուղարկված ծանուցման համաձայն՝ «ԳՀԱՊԶԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում հայտի 51-րդ չափաբաժնում /Սոնոգրաֆիայի գել 2/ արձանագրված անհամապատասխանության շտկմանն ի պատասխան ներկայացված տեխնիկական բնութագրում նշված «Տիանջին գելտեկ» անվանմամբ արտադրողի սոնոգրաֆիայի գելը ներառված չէ պատվիրատուին հասանելի և GE Healthcare ընկերության կայմից հաստատված ու լարաձայնային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ:

Հաշվի առնելով, որ Մասնակիցը հավաստել է վերոհիշյալ ցանկում ապրանքատեսակի ներառված լինելու հանգամանքը, խնդրել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել GE Healthcare ընկերության հասանելի պաշտոնական թույլատրելի միջոցների ցանկը:

Ի պատասխան վերոնշյալ ծանուցման, Մասանկիցը գրությամբ հայտնել է վերջինիս հասանելի պաշտոնական թույլատրելի միջոցների ցանկը նշելով՝ *«Սոնոգրաֆիկ գել, Պարկեր, Սոնոգել, Էկո-Մեդ, Վուքսի Մեդ, Տիանջին գելտեկ, Բեսմեդ, Ֆիտո Պերֆորմանս, Մեդիչոյս, Ռեհաբ, Պրիմաքս, Քուրենտ, Էնֆա, Սոնոսիդ, մացիոնալ Թերապի:»:*

Հանձնաժողովի 08.01.2020թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Աիդա» Թրեյդ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն 51-րդ

չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը՝ 51-րդ չափաբաժնի մասով հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/219-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն հրավերի 2-րդ մասի 2.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված թիվ 1.1-ի:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 51-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագրերը՝ Սոնոգրաֆիայի գել (սոնո գել)/2, ջրային հիմքով, մածուցիկ գել նախատեսված ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ օգտագործելու համար: Չի գրգռում մաշկը, չի վնասում ուլտրաձայնային սարքավորումների տվիչները: Պարունակում է՝ ջուր, պոլիմեր, խոնավեցնող միջոցներ, կոնսերվանտներ և գունավորող միջոցներ: Սոնո գելի pH-ը՝ 6,5 ± 0,5: Խտությունը՝ 1,05 gr/cm^3± 0,03: Փաթեթավորումը՝ 260գ± 10գ: Առաջարկվող ուլտրաձայնային գելը պետք է պարտադիր ներառված լինի GE Healthcare ընկերության ուլտրաձայնային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն և մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին…:

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 51-րդ չափաբաժնի համար առաջարկել է հետևյալը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

51	Սոնոգրաֆիկ գել(սոնո գել)/2	Սոնոգրաֆիկ գել(սոնո գել)/2	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան	Ջրային հիմքով, մածուցիկ գել նախատեսված ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ օգտագործելու համար: Չի գրգռում մաշկը, չի վնասում ուլտրաձայնային սարքավորումների տվիչները: Պարունակում է ջուր, պոլիմեր, խոնավեցնող միջոցներ, կոնսերվանտներ և գունավորող միջոցներ: Սոնո գելի pH-ը՝ 6,5 ± 0,5: Խտությունը 1,05 gr/cm3± 0,03: Փաթեթավորումը 260գ± 10գ: Առաջարկվող ուլտրաձայնային գելը պետք է պարտադիր ներառված լինի GE Healthcare ընկերության ուլտրաձայ նային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

Հանձնաժողովի 23.12.2019թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն թիվ 1.1 հավելվածում բոլոր չափաբաժիններում բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը, 51-րդ չափաբաժնում հստակ չի pH-ը, խտությունն ու տարողունակությունը, ինչով պայմանավորված որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Մասնակիցը ներկայացրել է արձանագրված անհամապատասխանության շտկված հետևյալ տարբերակը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
51	Սոնոգրաֆիկ գել(սոնո գել)/2	Սոնոգրաֆիկ գել(սոնո գել)/2	Տիանջին գելտեկ	Ջրային հիմքով, մածուցիկ գել նախատեսված ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ օգտագործելու համար: Չի գրգռում մաշկը, չի վնասում ուլտրաձայնային սարքավորումների տվիչները: Պարունակում է ջուր, պոլիմեր, խոնավեցնող միջոցներ, կոնսերվանտներ և գունավորող միջոցներ: Սոնո գելի pH-ը՝ 6,8: Խտությունը 1,05 gr/cm3± 0,03: Փաթեթավորումը 260գ± 10գ: Առաջարկվող ուլտրաձայնային գելը պետք է պարտադիր ներառված լինի GE Healthcare ընկերության ուլտրաձայ նային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին ուղարկված ծանուցման համաձայն՝ «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում հայտի 51-րդ չափաբաժնում /Սոնոգրաֆիայի գել 2/ արձանագրված անհամապատասխանության շտկմանն ի պատասխան ներկայացված տեխնիկական բնութագրում նշված «Տիանջին գելտեկ» անվանմամբ արտադրողի սոնոգրաֆիայի գելը ներառված չէ պատվիրատուին հասանելի և GE Healthcare ընկերության կայմից հաստատված ու լարաձայնային համակարգերի համալրիչ տվիչների շահագործման համար նախատեսված թույլատրելի միջոցների ցանկի մեջ, սակայն Մասնակիցը հավաստել է վերոհիշյալ ցանկում ապրանքատեսակի ներառված լինելու հանգամանքը, ուստի վերջինիս առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել GE Healthcare ընկերության հասանելի պաշտոնական թույլատրելի միջոցների ցանկը:

Ի պատասխան վերոնշյալ ծանուցման, Մասանկիցը գրությամբ հայտնել է վերջինիս հասանելի պաշտոնական թույլատրելի միջոցների ցանկը նշելով՝ *«Սոնոգրաֆիկ գել, Պարկեր, Սոնոգել, Էկո-Մեդ, Վուքսի Մեդ, Տիանջին գելտեկ, Բեսմեդ, Ֆիտո Պերֆորմանս, Մեդիչոյս, Ռեհաբ, Պրիմաքս, Քուրենտ, Էնֆա, Սոնոսիդ, մացիոնալ Թերափի:»:*

Հանձնաժողովի 08.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Աիդա» Թրեյդ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն 51-րդ չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, ինչով պայմանավորված Մասնակցի հայտը 51-րդ չափաբաժնի մասով մերժվել է՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն 51-րդ չափաբաժնով Սոնոգրաֆիայի գելի (սոնո գել)/2 pH-ը նշվել է՝ 6,5 ± 0,5:

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով ներկայացրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որում որպես սոնո գելի pH-ը նշվել է 6,5 ± 0,5, ինչպես նաև որպես ապրանքի արտադրողի անվանում՝ Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, ինչով պայմանավորված Հանձնաժողովը «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին առաջարկել է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանություն-

ները: Մասնակիցի կողմից ներկայացրել է արձանագրված անհամապատասխանության շտկված տարբերակը, որում նշվել է սոնո գելի pH-ը՝ 6,8, իսկ որպես ապրանքի արտադրողի անվանում՝ Տիանջիկ գելտեկ, փաստացի ստկելով այն բոլոր անհամապատասխանությունները, որոնք արձանագրվել էին Հանձնաժողովի կողմից:

Տվյալ դեպքում Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել է ապրանքի տեխնիկական բնութագրերը, որոնք ամբողջությամբ համապատասխանում են Ընթացակարգի հրավերի 51-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագերին, ինչպես նաև Մասնակիցը հստակ նշել է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը: Նման պայմաններում Հանձնաժողովը, մերժելով «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը՝ ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով, խախտել է Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Մասնակիցը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում շտկել է Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները, սակայն Հանձնաժողովը պահանջել է ևս մեկ անգամ կատարել շտկում, այն է՝ ներկայացնել GE Healthcare ընկերության հասանելի պաշտոնական թույլատրելի միջոցների ցանկը, այն դեպքում, երբ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ կրկին անգամ շտկում պահանջելու իրավունք չի նախատեսվում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ նման պայմաններում չի կարող առաջանալ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների խախտում, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/219-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/37 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ